

Գիտություն

ԸՇ գիտությունների ազգային ակադեմիայի թերթ

Հրատարակվում է 1993 թ. փետրվարից

Ռուսաստանի գիտությունների ակադեմիան և ԸՇ գիտությունների ազգային ակադեմիան ստորագրեցին գիտատեխնիկական համագործակցության ճանապարհային քարտեզ

Ս. թ. նոյեմբերի 5-ին Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի նախագահ, ակադեմիկոս Ալեքսանդր Սերգեևը և ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սադյանը ստորագրեցին Գիտատեխնիկական համագործակցության համաձայնագրի դրույթների իրականացման ճանապարհային քարտեզ ՀՀ ԳԱԱ-ի և ՌԳԱ-ի միջև:

ՀՀ ԳԱԱ-ի նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սադյանը իր ելույթում նշեց, որ ճանապարհային քարտեզը ենթադրում է համատեղ հետազոտությունների շարունակություն և համագործակցություն Հայաստանի և Ռուսաստանի համար արդիական և առաջնահերթ ուղղություններով:

«Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի համար մեծ նշանակություն ունի Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի հետ համագործակցությունը, հատկապես, որ մեր ակադեմիաները, մեր գիտնականները պատմականորեն կապված են իրար հետ: Կարևոր է, որպեսզի մեր համագործակցությունը տեղափոխենք նոր, ավելի բարձր մակարդակի վրա: Ես վստահ եմ, որ մեր համագործակցությունը բավականին հազեցած և գիտականորեն արդյունավետ կլինի, և մեր ինստիտուտների պատասխանատու մոտեցման, կառավարությունների աջակցության շնորհիվ կհասնենք լուրջ հաջողությունների, որը մեծ դեր կխաղա մեր երկրների տնտեսության զարգացման համար»,- ասաց ակադեմիկոս Աշոտ Սադյանը:

Իր ելույթում ՌԳԱ-ի նախագահ, ակադեմիկոս Ալեքսանդր Սերգեևը նշեց. «Մենք ունենք շատ ընդհանուր խնդիրներ: Չնայած նրան, որ մեր երկրները տարբեր են ֆորմատով և քաղաքական կառուցվածքով, մեր գիտնականները պետք է միավորվեն: Մենք ունենք բավականին լավ ներուժ իրար հետ աշխատելու և օգնելու համար: Ծանապարհային քարտեզը հստակ ցույց է տալիս այն կարևոր ուղղությունները՝ հիմնարար և կիրառական, որոնք արդյունավետ են մեր պետությունների շահերի համար»:

Ծանապարհային քարտեզում



նշված համատեղ հետազոտությունները ներառում են ֆիզիկայի, մաթեմատիկայի, ինֆորմատիկայի, նանոտեխնոլոգիաների, կենսաբանական գիտությունների և կենսատեխնոլոգիայի, քիմիայի և նյութերի մասին գիտության, պատմաբանասիրական, բժշկական, գյուղատնտեսական հետազոտությունների, էներգետիկայի, մեխանիկայի ուղղությունները: Ծանապարհային քարտեզում նշված են 54 համատեղ հետազոտություններ և նախագծեր:

Հայաստանում Ռուսաստանի արտակարգ և լիազոր դեսպան Սերգեյ Կոպիրկինը ողջունեց ռուս-հայկական գիտական համագործակցության այս նախաձեռնությունը: «Դա թույլ է տալիս մեզ վստահորեն շարժվել դեպի ապագա»,- ասաց ՌԴ դեսպանը:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Վահրամ Դումանյանը շեշտեց գիտական ծրագրերում երիտասարդ կադրերի ներգրավվածության կարևորությունը և ասաց. «Մենք կանենք մեզանից կախված ամեն ինչ, որպեսզի մեր գիտական կա-

տերավատ ճառագայթման զագաթնակետային հզորությամբ աղբյուրների համալիր, որը ստեղծման պահին համաշխարհային ռեկորդ էր: Սերգեևն առաջարկել է Ռուսաստանում ստեղծել աշխարհի ամենահզոր CELS լազերը, որը կկարողանար արտադրել հարյուրավոր մեգավատ հզորությամբ իմպուլսներ: Այս նախագիծը Ռուսաստանի կառավարության կողմից ներառվել է 2010-2020 թվականներին իրականացվող 6 մեգագիտական նախագծերի շարքում: Սերգեևը կազմակերպել է ռուս գիտնականների մասնակցությունը մի շարք խոշոր միջազգային ծրագրերում, մասնավորապես, LIGO գրավիտացիոն ալիքների բացահայտման



պերն ավելի ամրապնդենք»:

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Վահագն Խաչատուրյանը նշեց, որ Հայաստանը և Ռուսաստանը պետք է վերականգնեն բարձր տեխնոլոգիաների ոլորտում համագործակցության ավանդույթները:

ՌԳԱ-ի նախագահ, ակադեմիկոս Ալեքսանդր Սերգեևին ՀՀ ԳԱԱ նախագահ Աշոտ Սադյանը հանձնեց ՀՀ ԳԱԱ պատվավոր անդամի դիպլոմ: Ի պատիվ Ալեքսանդր Սերգեևի՝ ՀՀ ԳԱԱ պատվավոր անդամ ընտրվելու՝ ՀՀ ԳԱԱ նախագահության գլխավոր խորհրդական, ՌԳԱ արտասահմանյան անդամ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանն իր ելույթում ասաց, որ, համաձայն ՀՀ ԳԱԱ-ի կանոնադրության, պատվավոր անդամ ընտրվում են համաշխարհային ճանաչում ունեցող գիտնականները, որպեսզի նպաստեն Հայաստանի գիտության զարգացմանը:

Ակադեմիկոս Մարտիրոսյանը բարձր գնահատեց Ալեքսանդր Սերգեևի ներդրումը գիտության մեջ: «Սերգեևը Ռուսաստանի Դաշնության գիտական համրության առաջատար մասնագետներից է լազերային ֆիզիկայի, ֆեմտովայրկյանային օպտիկայի, պլազմայի ֆիզիկայի և բիոֆոտոնիկայի բնագավառներում: Նրա ղեկավարությամբ ստեղծվել է հարյուրավոր

աստղադիտարանի աշխատանքները: Այս հայտնագործության համար նրան 2016 թվականին շնորհվել է Տիեզերագիտության ոլորտում Գրուբերի մրցանակ»,- մասնավորապես ասաց Ռադիկ Մարտիրոսյանը:

Նա շեշտեց Ալեքսանդր Սերգեևի դերը ՀՀ ԳԱԱ-ի հետ գիտական համագործակցության զարգացման գործում, ինչը, ըստ ակադեմիկոս Մարտիրոսյանի, պայմանավորված է ռադիոֆիզիկայի ընդհանուր գիտական դպրոցի ազդեցությամբ, որն ունի հարուստ ավանդույթներ:

Իր պատասխան խոսքում Ալեքսանդր Սերգեևը նշեց. «Իմ համար շատ մեծ պատիվ է ձեզանից ստանալ նման կոչում: Ես կարծում եմ, որ մենք իսկապես կարող ենք լուրջ ներդրում ունենալ մեր երկրների զարգացման գործում ոչ միայն գիտության ոլորտում, նաև մշակույթի և միջկառավարական հարաբերությունների, և որ ամենակարևորն է, մենք շարունակենք մնալ մեր ժողովուրդների աչքերում որպես առանցքային դերակատարություն ունեցող կառույցներ: Ես իմ կողմից կներդնեմ բոլոր ջանքերս՝ արժանի լինելու համար այս բարձր կոչմանը»,- ասաց ՌԳԱ-ի նախագահը:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն



ՌԳ գիտությունների ակադեմիայի նախագահ, ակադեմիկոս Ալեքսանդր Սերգենև ընտրվել է ՀՀ ԳԱԱ պատվավոր անդամ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ընդհանուր ժողովը Ռուսաստանի Դաշնության գիտությունների ակադեմիայի նախագահ, ակադեմիկոս Ալեքսանդր Սերգենևին ընտրել է ՀՀ ԳԱԱ պատվավոր անդամ ՀՀ ԳԱԱ նախագահության որոշման հիման վրա:

Ալեքսանդր Սերգենևը ՌԳԱ-ի նախագահ է 2017 թ.-ից: Նրա գիտական հետազոտություններն ընդգրկում են լազերային ֆիզիկայի, ֆեմտոսեկունդային օպտիկայի, ոչ գծային ալիքային երևույթների տեսության, պլազմայի ֆիզիկայի և բիոֆոտոնիկայի բնագավառները:

Ակադեմիկոս Սերգենևի ղեկավարած գիտական խմբի մշակած պատկերապատման մեթոդները հնարավորություն են ընձեռում ախտորոշելու ուռուցքաբանական հիվանդությունները: Խմբի աշխատանքներն ուղղված են կենսաբանական հյուսվածքների օպտիկական տոնոգրաֆիայի գործիքների ստեղծմանն ու օգտագործմանը և ներառում են այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են օպտիկական համահունչ տոնոգրաֆիան, օպտիկական դիֆուզիոն տոնոգրաֆիան, դիֆուզիոն լյումինեսցենտային տոնոգրաֆիան, ուլտրամիկրոսկոպիան:

Ալեքսանդր Սերգենևի բեղմնավոր գիտական գործունեության մասին են վկա-



յում նրա 350 գիտական հոդվածներն ու աշխատությունները՝ զուգակցված մանկավարժական արգասաբեր աշխատանքի հետ:

Գիտության մեջ ծանրակշիռ ներդ-

րումների համար վաստակաշատ գիտնականն արժանացել է Ռուսաստանի Դաշնության պետական մրցանակի (1999 թ.), կառավարության մրցանակի (2012 թ.), պարգևատրվել է Պատվո-

շքանշանով (2006 թ.):

Ալեքսանդր Սերգենևը ՀՀ և ՌԴ գիտությունների ակադեմիաների համատեղ գիտահետազոտական գործունեության ջատագովներից է: Համաձայն գիտատեխնիկական համագործակցության ճանապարհային քարտեզի նախագծի՝ երկու երկրների ակադեմիաների կողմից իրականացվելու են լայնամասշտաբ ծրագրեր՝ լեռնային լճերի էկոլոգիական վիճակի գնահատման հեռահար մեթոդի մշակում, երկրաֆիզիկական և սեսմագեոդինամիկ գործընթացների ուսումնասիրություն, սինթետիկ մորմոնների վրա հիմնված ակուստաէլեկտրոնային սարքերի մշակում և ստեղծում, COVID-19 ախտորոշիչ փաթեթների մշակում, երիտասարդ գիտնականների առաջխաղացման հարցերի քննարկում և այլն:

Հիշեցնենք, որ սեպտեմբերի 30-ին ՀՀ ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Աշոտ Սաղյանը Մոսկվայում հանդիպել էր ՌԳԱ-ի նախագահ Ալեքսանդր Սերգենևին, քննարկվել էին երկու պետությունների ակադեմիաների համագործակցության գերակա ուղղությունները:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան ընդունեց ԱՄՆ ռազմածովային հետազոտությունների գլոբալ գրասենյակի պատվիրակությանը



Ս.թ. նոյեմբերի 9-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան ընդունեց ԱՄՆ-ի ռազմածովային հետազոտությունների գլոբալ գրասենյակի պատվիրակությանը: Հանդիպումը կազմակերպվել էր Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամի (FAST) աջակցությամբ:

Հանդիպման մասնակիցներին ողջունեցին ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար, ՀՀ ԳԱԱ նախագահության անդամ Արթուր Իշխանյանը և ԱՄՆ ռազմածովային հետազոտությունների գլոբալ գրասենյակի նախագծերի ղեկավար Պատրիկ Ռոուզը:

Հանդիպման նպատակն էր տեղում ծանոթանալ նորարարական գաղափարներին և նախագծերին, բացահայտել ապագայում դրանց ֆինանսավորման հեռանկարները: Պատրիկ Ռոուզը ներկա-

յացրեց այցի նպատակները, հանդես եկավ Ռազմածովային հետազոտությունների գլոբալ գրասենյակի և Բանակի միջազգային տեխնոլոգիական կենտրոնի վերաբերյալ զեկույցներով:

Պատրիկ Ռոուզը նշեց, որ պատրաստ են աջակցել «ամենատարօրինակ», նորարարական, ավանդական մտածողությունը կոտրող, բեկումնային ծրագրերին: Նա հրավիրեց հայ երիտասարդ գիտնականներին համագործակցելու և ներկայացնելու իրենց գաղափարները, որոնց իրագործումը թվում է անիրատեսական, սակայն կարող են վերածվել կոնկրետ արգասիքի:

Հանդիպման ժամանակ ներկայացվեցին ՀՀ ԳԱԱ ինստիտուտների գործունեությունը և հիմնական հետազոտությունները:

ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտու-

յունների ինստիտուտի տնօրեն Արամ Պապոյանը հայտարարեց. «Մեր կարգախոսն է՝ հետազոտություններում առաջատար փորձի շնորհիվ հասարակության բարգավաճում»: Նա նշեց, որ ինստիտուտը ունի միջազգային համագործակցության լայն փորձ, մասնակցել է շուրջ 90 միջազգային նախագծերի իրականացմանը և հրատարակում է տարեկան 70 հոդված գրախոսվող ամսագրերում:

ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի տնօրեն Խաչատուր Մելիքսեթյանը ներկայացրեց երկրաբանության ոլորտում ԱՄՆ-Հայաստան համագործակցության պատմությունը, ընթացիկ ծրագրերը և հեռանկարները: Նա ներկայացրեց հայ-ամերիկյան համագործակցության արդյունքները՝ կապված սեսմիկ, հրաբխային վտանգների, տեկտոնիկայի, երկրաջերմային էներգիայի,

ակտիվ գեոդինամիկայի և այլ ուղղությունների հետ:

ՀՀ ԳԱԱ Վիկտոր Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանի գործունեությունը ներկայացրեց տնօրեն Արեգ Միքայելյանը, իսկ ՀՀ ԳԱԱ Օրբելու ֆիզիոլոգիայի ինստիտուտի հետազոտությունների մասին խոսեց ֆիզիոլոգիապես ակտիվ նյութերի հետազոտման լաբորատորիայի ղեկավար Արմեն Ոսկանյանը:


Հարց ու պատասխանի ժամանակ գիտնականները կիսվեցին իրենց գաղափարներով: Հանդիպման մասնակիցները վստահություն հայտնեցին, որ համատեղ մտքերի և ջանքերի արդյունքում կստեղծվի արդյունավետ և շարունակական համագործակցություն:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն



ԿԱՐՈՂ ԵՆՔ ՀԱՂԹԵԼ

Նոբելյան ստացած երկրորդ հայ գիտնականը
հաստատում է մեր հույսը



Երկուշաբթի՝ հոկտեմբերի 4-ին, երբ հայտնի դարձավ, որ Նոբելյան կոմիտեն բժշկության ասպարեզում բացառիկ է նկատել Արտեմ Փաթափությանի և Դեյվիդ Յուլիուսի հայտնագործությունը, գերմանական լրատվամիջոցները, լրագրողները, գիտնականները, նաև որոշ քաղաքական գործիչներ չթաքցրին իրենց ակնկալած նախընտրելի՝ ինչո՞ւ Covid-19-ի դեմ լավագույնը համարվող գերմանա-ամերիկյան Բայոնթեք-Ֆայզեր BioNTech Pfizer պատվաստանյութի հեղինակները չեն դարձել Ստոկհոլմի ժյուրիի ընտրությունը:

Գերմանական լրատվամիջոցները նշեցին, որ մրցանակը ստացել են երկու ամերիկացի գիտնականներ, բայց Փաթափությանի պարագայում լրացրին՝ ծագումով Լիբանանից: Հայերս, բնական է, նույն օրը և հաջորդ օրերին Փաթափությանի հաղթանակի մասին պատմեցին՝ պեղելով մեր ընտանեկան ակունքների և Նոբելյան մրցանակի ներկայացված մյուս հայ գիտնականների կենսագրության կարևոր մանրամասներ: Այդպես առիթ եղավ անդրադառնալու, որ տարբեր տարիների՝ իտալաբնակ սենատոր, քիմիկոս Ջակոմո Զամիչյանից սկսյալ, որ 20-րդ դարի սկզբին 4 անգամ դարձել էր մրցանակի թեկնածու, Նոբելյանի թեկնածու են եղել նաև հայ գրողներ: Գրող Վարուժան Ոսկանյանի, MRT-ի հեղինակ Ռեյմոնդ Դամարյանի, հայտնի տնտեսագետ Տարոն Աճեմօղլուի, օգանեսոն քիմիական տարրի հեղինակ Յուրի Զովիանինյանի՝ Նոբելյան չստանալն էլ մեզ հետ միասին մեծ փստոսանքով են ընդունել ոչ հայեր նաև: Իսկ հայերս, անկեղծ ասած, շատ էլ չենք ոգևորվել, երբ 2007-ին ԱՄՆ-ի նախկին փոխ-

նախագահ Ալ Գորն ու կլիմայագետ գիտնականների թիմը Նոբելյան ստացավ, նրանց մեջ էր վերջապես մեր փոքրաթիվ ազգի առաջին գիտնականը՝ 1954-ին Փենսիլվանիայում ծնված Տորք (Դորք) Սահակյանը: Եթե ոգևորված լինեինք, նա կդառնար հեռուստաեթերի հերոս, մեր օրինակը՝ լուրջ նպատակ դնել ու սլանալ դեպի այդ նպատակը, կդառնար Հայաստանում դպրոց ու բուհ հաճախող բազմաթիվ տղաների ու աղջիկների երազանքը: Միգուցե կա այդ երազանքը, ապրում է հայ ժողովրդի տաղանդավոր

պատանիների մտքում, բայց պետությունը նվազագույն միջոց չի ծախսում, որ թև տա այդ պատանուն, որ մարմին տա մեր երազանքին: Իսկ լրագրությունն էլ գիտության նվաճումների մասին հասկանալի լեզվով պատմելու կարևորությունը կարծես այնքան էլ չի գիտակցում: Արտեմ Փաթափությանը գիտական Օլիմպոսին հասած երկրորդ հայ գիտնականն է: Մենք ուրախությամբ արձանագրեցինք, որ հայկական կրթությունում, սերունդ է մտավորական ընտանիքից. հայրը գրող Սարգիս Վահագն է,

մայրը՝ Բեյրութի Դեմիրճյան հայկական վարժարանի ուսուցչուհի է եղել: Հայաստանի հետ ամուր կապված մարդ է բարձունքին հասած Փաթափությանը: Երկուշաբթի օրվա համառոտ լրատվության մեջ չէի թաքցրել ուրախությունս, որ նա՝ Նոբելյան ստացած Փաթափությանը, վերապրողի զավակ է՝ չընկճվող, հաստատական, ուրիշ ուժի տեր: Պարզվեց, այս շեշտադրումը, այս զգացողությունը հատուկ են նաև ուրիշների: Շվեյցարիայում լույս տեսնող հրեական «Tachles» շաբաթաթերթում կարդում են. «Դեյվիդ Յուլիուսը հպարտ է իր հրեական արմատներով: Նա լույս աշխարհ է եկել 1955-ին Նյու Յորքում, ցարական Ռուսաստանից գաղթած հրեաների թոռ է: Նա երբեք չի մոռացել, որ իր նախնիները հրեաների հանդեպ ատելության պատճառով են ԱՄՆ-ում հայտնվել», - գրում է թերթը՝ կարևորելով նաև Փաթափությանի ազգային ակունքները: «Լիբանանում հասակ առած Փաթափությանը հայկական ծագում ունի: 18 տարեկանում նա ԱՄՆ է գաղթել՝ տեղի քաղաքացիական պատերազմի պատճառով»:

Չորեքշաբթի օրը՝ հոկտեմբերի 6-ին, երբ հայտնի դարձավ, որ քիմիայի բնագավառում Նոբելյանը գերմանացի գիտնական Բենիամին Լիստն է ստացել, ընկալելի դարձավ, որ ազգային պատկանելությամբ շեշտադրված հաղթանակի բերկրանքը վայելելը փոքրաթիվ մեր ժողովրդի սնապարծ էգոյի արտահայտություն չէ: Գերմանացիներն էլ երկու օր է՝ շեշտադրում են Լիստի ազգային պատկանելությունը:

Անահիտ ՀՈՎՍԵԳՅԱՆ
Գերմանիա

ԱՆՑՈՒՂԱՐԶ

Շնորհավորանքներ ՀԲԸՄ շրջանավարտ դոկտոր Արտեմ Փաթափությանին՝ բժշկության ասպարեզում Նոբելյան մրցանակի արժանանալու կապակցությամբ

12 հոկտեմբեր 2021 թ.

ՀԲԸՄ Կենտրոնական վարչությունը սիրով և հպարտությամբ տեղեկացավ այն մասին, որ ՀԲԸՄ Լիբանանի Դեմիրճյան դպրոցի, ՀԲԸՄ Հովակիմյան-Մանուկյան վարժարանի և ՀԲԸՄ Անդրանիկ երիտասարդական ընկերակցության շրջանավարտ դոկտոր Արտեմ Փաթափությանը արժանացել է Նոբելյան մրցանակի ֆիզիոլոգիայի կամ բժշկության ասպարեզում՝ ջերմաստիճանի և հպումների վերաբերյալ նորարարական հետազոտության համար:

Ամվանի միկրոկենսաբանին ուղղված իր անձնական շնորհավորական նամակում ՀԲԸՄ Նախագահ Պերճ Սեդրակյանը գրել է. «Ողջ հայ ազգը հպարտությամբ ու գոհունակությամբ է հանակվել մեր հայրենակցի՝ բժշկության ասպարեզում միանգամայն արժանիորեն աշխարհի ամենաբարձր պարգևներից մեկին արժանանալու կապակցությամբ»:

Ինչպես շատերը գիտեն, դոկտոր Փաթափությանն իր դաստիարակությունը ստացել է Լիբանանի շատ ակտիվ հայկական համայնքում: Նա և Կալիֆոռնիայում գտնվող իր ընտանիքը պահպանում են կապը տեղի հայ համայնքի հետ: Կալիֆոռնիայի Լա Ջոլլայի համալսարանի Սթրիփսի ինստիտուտի մոլեկուլյար կենսաբան դոկտոր Փաթափությանի հայտնագործությունը կապված մեր հետ, թե հպումը, ջերմությունն ու սառնությունը նորահայտ զգայարանի միջոցով ինչպես են ազդակներ հաղորդում նյարդային համակարգին, գրավել է Նոբելյան մրցանակաբաշխության կազմակերպիչների ուշադրությունը: Ենթադրվում է, որ այս հայտնագործությունը ա-



պագայում հսկայական ազդեցություն կունենա ցավի մեղմման և ամոքման հարցերում:

Աշխարհի բոլոր ծագերի հայերի համար սա անկեղծ հպարտության առիթ է: Սեդրակյանը նշել է. «Դոկտոր Պատապուտյան. մենք շնորհավորում ենք ձեզ մասնագիտական նվաճման առթիվ՝ որպես Նոբելյան մրցանակի դափնեկիր: Մարդկության կատարելագործման մեջ Ձեր ներդրմամբ Դուք աշխարհին հիշեցնում եք, որ հայ ժողովուրդը, փոքրաթիվ լինելով հանդերձ, ի գործ է արձանագրելու փառահեղ նվաճումներ, որոնք կարող են բարելավել միլիոնավոր մարդկանց կյանքը ողջ աշխարհում»:

2020 թվականի նոյեմբերին դոկտոր Փաթափությանը հայտնվել էր AGBU Insider պարբերականի էջերին՝ պատասխանելով իր աշխատության և ապաքինման հարցում դրա նշանակության վերաբերյալ հարցերի:

Քանդակագործության 2022-ի «Նաշեր» մրցանակը՝ Նաիրի Բաղրամյանին

«Նյու Յորք թայմսում» հրատարակված իր հոդվածում Փիթեր Լիբերը տեղեկացնում է, որ սեպտեմբերի 14-ի մրցանակաբաշխության արդյունքներով բեռլինաբնակ Նաիրի Բաղրամյանն արժանացել է 2022-ի «Նաշեր» մրցանակին, որ Դալլասի Նաշեր քանդակագործության կենտրոնը շնորհում է «այն արվեստագետներին, որոնք զարգացնում և ընդարձակում են քանդակագործության իմաստն ու հնարավորությունները»: Նաիրին ստանալու է 100,000 ամերիկյան դոլար և պատիվ է ունենալու առաջիկա գարնանը մասնակցելու Դալլասում կայանալիք հատուկ արարողությանը, որի ընթացքում նրան է շնորհվելու վերոնշյալ քանդակագործության կենտրոնի ճարտարապետ Ռենդո Պիանոյի նախագծած մրցանակը:

Նախկինում այդ մրցանակին արժանացել են Մայքլ Ռակովիցը, Դորիս Սալսեդոն, Իզա Գեմզկենը, Պիեռ Հույգեն և ուրիշներ: Կենտրոնի տնօրեն Ջերեմի Ստրիկի խոսքերով Բաղրամյանի աշխատանքի արժանիքներն առավել ուշագրավ էին հատկապես համավարակի պարտադրած սոցիալական մեկուսացման պայմաններում: «Խորապես պահպանելով իրենց կաղապարի ավանդական արտաքին տեսքն ու ձևը, Բաղրամյանը կարողացել է ընդհանուր բովանդակությանը հաղորդել անձնական, ֆիզիկական շոշափելի կապի անհրաժեշտության կարևորությունը՝ դրանով իսկ ընդարձակելով քանդակագործության հնարավորությունները»:

Հ. Ծ.

«ՍԱՍՈՒՆՅԻ ԴԱՎԻԹԸ»

Աթենքի «Վաթխիքոն» հրատարակչությունը վերջերս լույս է ընծայել «Սասունցի Դավիթ. հայոց ժողովրդական դյուցազնավեպը» գիրքը Յորդոս Մուլեսկիսի հունարեն թարգմանությամբ և առաջաբանով: Այն ընդգրկում է հատվածներ հայոց դյուցազներգությունից և կազմում է 190 էջ:

Նիկոսիայում բնակվող Յորդոս Մուլեսկիսը կիպրացի բանաստեղծ և թարգմանիչ է: Ուսանել է Մոսկվայի Լոմոնոսովի անվան համալսարանում, սովորել ռուսերեն և հայերեն: Թարգմանել է 20-րդ դարի ռուսական պոեզիա: 1978-ին Երևան կատարած այցելությունից հետո գրել է «Ընկերներ» բանաստեղծությունը: 1988-ին՝ Հայաստանի երկրաշարժից հետո, գրել է «Նամակ հայ բանաստեղծ Գևորգ Էմինին», որը հրատարակվել է «New Age» ամսագրում (թիվ 193, նոյեմբեր-դեկտեմբեր):

Հատորի պատկերազարդումները կատարել է Մարիամ Սուխանովա-Ֆուբարան՝ կիպրաբնակ նկարչուհի, հայ նշանավոր գեղանկարչուհի Լավինիա Բաթբեուկ-Մելիքյանի դուստրը:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտում Ռուս-հայկական համալսարանի հետ համագործակցությամբ ստացել են գերբարակ երկչափ կիսահաղորդիչներ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի և Ռուս-հայկական համալսարանի համատեղ կիսահաղորդչային նանոէլեկտրոնիկայի լաբորատորիայում՝ ապակե և պոլիմերային տակդիրներով, ածեցվել են անցումային մետաղների երկբալկոգենիտների դասին պատկանող մոլիբդենի երկսուլֆիդի (MoS₂) գերբարակ, ատոմական հաստությամբ, մինչև 1 սմ² մակերեսով, երկչափ (2D) կիսահաղորդիչներ, որոնք մոտակա տասնամյակում կարող են դառնալ թափանցիկ, ճկուն և ծալվող էլեկտրոնիկայի հիմքը:

Լաբորատորիայի վարիչ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆեսոր Ստեփան Պետրոսյանի խոսքով՝ նման երկչափ նյութերից առաջինը՝ գրաֆենը, ստացվել է շուրջ 10 տարի առաջ, ինչի համար ռուս գիտնականներ Անդրեյ Գեյմին և Կոնստանտին Նովոսյոլովին 2010 թ.-ին շնորհվել է Նոբելյան մրցանակ ֆիզիկայի բնագավառում: Այդ նյութն աշխարհում հայտնի ամենաբարակ բյուրեղական նյութն է, այն հարթ ցանց է՝ բաղկացած վեցանկյուններից, որոնց գագաթներում տեղադրված են ածխածնի

(C) ատոմները: Ընդ որում, բոլոր ատոմները մակերևութային են, և չկա դրանց տարանջատում ծավալայինի և մակերևութայինի, ինչպես դա հնարավոր է սովորական նյութերում: Ատոմների միջև գործող կովալենտ կապերի շնորհիվ գրաֆենն օժտված է մեծ մեխանիկական ամրությամբ և ճկունությամբ: Գրաֆենը, ի տարբերություն սովորական կիսահաղորդիչների, չունի արգելված գոտի և օժտված է շատ մեծ, համարյա մետաղական հաղորդականությամբ, ինչը սահմանափակում է նրա գործնական կիրառությունները:

Ի տարբերություն գրաֆենի՝ մոլիբդենի երկսուլֆիդի թաղանթներն ունեն վերջավոր և հաստությունից կախված արգելված գոտու լայնություն՝ ընկած 1.2-1.8 էՎ տիրույթում: Ատոմական հաստության այսպիսի կիսահաղորդիչներն ունեն գրաֆենի նման հարթ բյուրեղական ցանց, կարող են լեզվարացվել, օժտված լինել n- և p- տիպի հաղորդականությամբ և մեծ հետաքրքրություն են ներկայացնում էլեկտրոնային, օպտիկական, մեխանիկական և այլ սարքերի համար:

Պարզվում է, որ ատոմական մենաշերտի հաստությամբ մոլիբդենի երկ-

սուլֆիդը ուղիղ գոտիներով կիսահաղորդիչ է, որը կարող է պայծառ լուսարձակել էլեկտրական կամ օպտիկական զրգռումների ժամանակ: Ուստի, ղեկավարելով բարակ թաղանթում ատոմական մենաշերտերի թիվը, կարելի է հեշտությամբ ղեկավարել նյութի հատկությունները: Գոյություն ունեցող սինթեզի մեթոդներից լաբորատորիայում օգտագործվել է լազերախմպուլսային փոշեցրման մեթոդը, որի ժամանակ որոշիչ են իմպուլսների թիվը և էներգիան: Պարզվել է, որ ընտրված պայմաններում հատուկ բաղադրությամբ թիրախներից կարելի է ընդամենը 5 իմպուլսի օգնությամբ աճեցնել մոլիբդենի երկսուլֆիդի որակյալ ատոմական մենաշերտ, որի հաստությունն ընդամենը 6 ժ է: Այդ շերտի ատոմները մասնակցում են իրար նկատմամբ ջերմային տատանումների, ինչպես շերտի հարթության մեջ, այնպես էլ այդ հարթությանն ուղղահայաց ուղղությամբ: Իրարից հաճախություններով տարբերվող նման ցանցային տատանումները կարող են փոխադրել լույսի հետ և առաջ բերել ֆոտոների ռամանյան ցրում, որի սպեկտրը միարժեքորեն վկայում է թաղանթում

ատոմական շերտերի թվի մասին: Բացի նման հետազոտություններից, չափվել են նաև մոլիբդենի երկսուլֆիդի երկչափ բյուրեղների ռետագենյան դիֆրակցիայի, օպտիկական կլանման և ֆոտոլյումինեսցենցիայի սպեկտրները, որոնք ենթարկվում են սահուն էվոլյուցիայի թաղանթների մեջ ատոմական հարթությունների թվի մեծացմանը զուգընթաց: Ցույց է տրված, որ օպտիկական հատկություններում էական դեր են խաղում նաև մեծ կապի էներգիայով օժտված երկչափ էքսիտոնները, որոնք կարող են գոյատևել մոյմիսկ սեյսակային ջերմաստիճանում: Արդյունքները հրատարակվել են Journal of Contemporary Physics (Armenian Academy of Sciences) ամսագրի՝ 2021 թ. 3-րդ համարում:

Ներկայում աշխատանքներ են տարվում՝ երկչափ բյուրեղների մոլիբդենի երկսուլֆիդի հիման վրա ստեղծելու ֆոտոզգայուն կառուցվածքներ, այդ թվում՝ ցածրաշառժակային պոլիմերային թաղանթների վրա:


ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

Հայ գիտնականները նոր դեղապրոմա են առաջարկում Սևանա լիճը ճահճացումից փրկելու համար

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի (ԳԱԱ) կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնը, ԳԱԱ երկրաբանության ինստիտուտը, Երևանի պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետի գենետիկայի և բջջաբանության ամբիոնը և «Բիոմիներալ» ՍՊԸ-ն մոդելային սարք են ստեղծում, որի օգնությամբ Սևանա լճի ծաղկման փուլում լճի աղտոտված ափամերձ տարածքները կմաքեն լրացուցիչ օրգանական նյութերից: Դա կնվազեցնի կենսածին տարրերի քանակը լճում և կդադարեցնի էվորոֆագման (կամ ճահճացման) գործընթացը:

Վերջին տարիներին Սևանա լիճը ծաղկում է ազոտի և ֆոսֆորի մեծ քանակությամբ ներթափանցման պատճառով: Արդյունքում ջրում նվազում է ձկների ու ջրային այլ կենդանիների համար հասանելի թթվածնի քանակը և հանգեցնում ջրային կյանքի խեղճման: Սևանա լճում «ծաղկում» առաջացրած Cyanophyta խմբին պատկանող տեսակները տոքսիկ են և արտազատում են կայուն թույներ՝ միկրոցիստիններ և անատոքսին:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվող «Սևանա լճի էվորոֆագման մեխանիզմների գնահատում» և «Ծաղկման» երևույթների դեմ պայքարի մեթոդների մշակում» նպատակային ծրագրերի շրջանակներում ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնը, ԳԱԱ երկրաբանության ինստիտուտը, Երևանի պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետի գենետիկայի և բջջաբանության ամբիոնը և «Բիոմիներալ» ՍՊԸ-ն իրականացնում են Սևանա լճում էվորոֆագման գործընթացի դանդաղեցմանն ուղղված ուսումնասիրություններ ու մի-




ջոցառումներ: Գիտնականները համատեղ ուժերով իրականացնում են Սևանա լճի էվորոֆագման մեխանիզմների գնահատման և ծաղկման երևույթների դեմ պայքարի մեթոդների մշակման աշխատանքներ: Ծրագրերի շրջանակներում իրականացվել են Սևանա լճի ջրի գենաթունային և կանցեռոգեն հատկությունների գնահատում, լճի ջրային մոնիթրինգի գենոտոքսիկության և կլաստոգենության մակարդակների բիոթեստավորում Տրադեսկանցիայի 02 կլոնի առեջաթելերի մազիկների (ԱԹՄ) և միկրոկորիզային թեստ համակարգերի կիրառմամբ: ԱԹՄ-ի բիոթեստի տվյալները ուսումնասիրված բոլոր ջրային մոնիթրինգում ցույց են տվել ծաղկման շրջանում սոմատիկ կետային և անգույն մուտացիաների, ինչպես նաև անկենսունակ մազիկների քանակի հավաստի բարձրացում: Մակարդակի առավելագույն բարձրացում դիտվել է Լճաշենի հարակից տարածքի ջրային մոնիթրինգում: Նմանատիպ արդյունքներ դիտ-

վել են նաև միկրոկորիզային թեստի տվյալների ուսումնասիրության ժամանակ՝ հետազոտելով նրա երկու հիմնական թեստ-կրիտերիաները՝ միկրոկորիզների պարունակող տետրադների տոկոսը և միկրոկորիզների տոկոսը տետրադներում:

2020 թ.-ից հետազոտվում են Սևանա լճի ջրի ծաղկման մեխանիզմները, մշակվում է կապտականաչ ջրիմուռներից ջրերի մաքրման նպատակով Հայաստանի ցեոլիտների օգտագործման մեթոդաբանությունը, կատարվում է մաքրման ընթացքում ջրի բաղադրության վրա ցեոլիտների ազդեցության գնահատում: Գիտական կազմակերպությունները լճից միկրոօրգանիզմների, միկրոջրիմուռների, ցիանոբակտերիաների հեռացման համար աշխատում են ստեղծել էժան և անվնաս կլանիչներ, որոնց շարքում են դասվում նաև բնական ադսորբենտներն ու բնական պոլիմերները:

Հայաստանը հարուստ է բնական աղ-



տորենտների հանքային պաշարներով՝ ցեոլիտներ, դիատոմիտներ, պեոլիտներ, կավեր և այլն: Ծրագրի շրջանակներում որպես ադսորբենտ օգտագործվում են ցեոլիտները, որոնք բնական միներալներ են՝ կազմված սիլիցիումի, ալյումինի և թթվածնի ատոմներից:

Ընտրված սորբենտի ազդեցությամբ 10 րոպեի ընթացքում մանրէների քանակը նվազել է 300 անգամ: Փորձեր են արվում սորբենտի ազդեցության արագությունը մեծացնելու ուղղությամբ: Հենց այս ցեոլիտների օգնությամբ մոդելային սարքի միջոցով Սևանա լճից կկանվեն լճի համար վնասակար միկրոօրգանիզմները, միկրոջրիմուռները, ցիանոբակտերիաները:

Արդեն իսկ ստացված արդյունքները տպագրվել են հանրապետական և արտերկրյա մի շարք հանդեսներում:

Ծրագրի գիտական ղեկավարն է ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի տնօրեն, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Բարդուխ Գաբրիելյանը: Արդյունքները հրապարակվել են մի շարք գիտական հանդեսներում, մասնավորապես «Limnology and Freshwater Biology», 2020 (4) պարբերականում:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԳՐԱՇՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԿԻՐՅԱԼԸ ՎԱԶԵ ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 70-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ



Լրացավ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչական-արտատրական ՊԺԲ ընկերության գլխավոր տնօրեն, պատմական գիտությունների թեկնածու, Հայաստանի ժուռնալիստների միության անդամ Վազե Խաչիկի Հովակիմյանի ծննդյան 70-ամյա հոբելյանը, ինչի առթիվ «Գիտություն» թերթի խմբագրությունը սրտանց շնորհավորում է վաստակաշատ գրահրատարակչին:

Երկար տարիների համատեղ աշխատանքը, գործընկերային ջերմ փոխհարաբերությունները ինձ հնարավորություն են ընձեռել առավել մոտիկից ճանաչելու Վ. Հովակիմյանին՝ որպես մասնագետի, ղեկավարի և, ընդհանրապես, որպես մարդու: Նրա մասնագիտական կողմնորոշման և անհատականության ձևավորման գործում որոշիչ է եղել հոր՝ հայտնի քաղաքական-հասարակական գործիչ Խաչիկ Հովակիմյանի դերը, ուն ճանաչել եմ անձամբ և երկար տարիներ ընկերակցել: Այս ամենն ինձ թույլ է տալիս հակիրճ ներկայացնել հոբելյարի անցած ճանապարհը և փորձել այն արժևորել:

Վ. Հովակիմյանը ծնվել է 1951 թ. նոյեմբերի 7-ին Երևանում: 1973 թ. գերազանցության դիպլոմով ավարտել է ԵՊՀ պատմության ֆակուլտետը և ընդունվել ԳԱ

պատմության ինստիտուտի ասպիրանտուրա: Այդ թվականից մինչև օրս նրա գիտակազմակերպչական ողջ գործունեությունը կապված է Գիտությունների ազգային ակադեմիայի հետ: 1979 թ. նրան շնորհվել է պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1976-1984 թթ. աշխատել է ԳԱ պատմության ինստիտուտում՝ որպես գիտաշխատող, ապա ինստիտուտի գիտական քարտուղար: Վ. Հովակիմյանն ավելի քան երեսուն գիտական հոդվածների և մենագրության հեղինակ է, ինչպես նաև մի շարք գրքերի համահեղինակ:

1985 թ. ԳԱԱ նախագահության որոշմամբ Վ. Հովակիմյանը գիտական աշխատանքից տեղափոխվում է նոր բնագավառ՝ իրեն այնքան հարազատ հրատարակչական ոլորտ, նշանակվելով ԳԱ հրատարակչության գլխավոր խմբագիր, իսկ 1991 թ.՝ տնօրեն: 2000 թ. ՀՀ ԳԱԱ նախագահության որոշմամբ Վ. Հովակիմյանը նշանակվել է ԳԱԱ «Գիտություն» հրատարակչական-արտատրական ՊԺԲ ընկերության գլխավոր տնօրեն, որտեղ շարունակում է պաշտոնավարել մինչ օրս:

Ավելի քան 35 տարի Վ. Հովակիմյանը ակադեմիական գրահրատարակչության ոլորտում է, և, ամենուշտ, զգալի են նրա ներդրումը և վաստակը այս բնագավառում: Այդ տարիներին լույս են տեսել հազարավոր գրքեր և գիտական ամսագրեր: Վ. Հովակիմյանը մեր հանրապետության հրատարակչական գործի երախտավորներից է, որի վկայությունը հայ գրատպության 500-ամյակի կապակցությամբ նրան շնորհված «Մովսես Խորենացի» մեդալն է:

Կրկին շնորհավորելով գրահրատարակչական գործի հմուտ կազմակերպչին, մեր բարի ու կամեցող գործընկերոջը՝ ցանկանում ենք նրան առավել եռանդով շարունակել իր արգասաբեր և շնորհակալ աշխատանքը:

Ստորև հրապարակում ենք ԳԱԱ նախագահության ուղերձը:

«Գիտություն» թերթի գլխավոր խմբագիր Ա. Տեր-Պաբրիկյան

ԸՇ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ԸՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ - ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊԺԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ Վ. Խ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻՆ

Հարգարժան Վազե Խաչիկի

Սրտանց շնորհավորում ենք Ձեզ 70-ամյա հոբելյանի կապակցությամբ:

Ձեր բազմամյա արգասաբեր գործունեությունը անխզելիորեն կապված է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հետ, որտեղ Դուք անցել եք ասպիրանտից մինչև ակադեմիական համակարգի կարևոր կառույցներից մեկի գլխավոր տնօրեն ճանապարհը:

Ծանրակշիռ է Ձեր վաստակը ակադեմիական գրահրատարակչության ոլորտի զարգացման գործում: Երեք տասնամյակ ղեկավարելով ԳԱԱ հրատարակչությունը՝ Դուք գիտական և ընթերցող լայն հանրությանն եք ներկայացրել հազարավոր գրքեր և գիտական հանդեսներ: Դրանցից լավագույններն արժանացել են ՀՀ նախագահի, ՀՀ մշակույթի նախարարության, Գիտությունների ակադեմիաների միջազգային ասոցիացիայի մրցանակներին ու դիպլոմներին: Գնահատելի է նաև Ձեր ներդրումը հայ դասականների երկերի ակադեմիական հրատարակչության ուղղությամբ:

Դուք երկար տարիներ Գիտությունների ակադեմիաների միջազգային ասոցիացիայի գրահրատարակչական խորհրդի, «Научная книга: հանդեսի միջազգային խմբագրական կոլեգիայի, Դ. Ս. Լիխաչովի անվան ամենամյա մրցանակներ շնորհող փորձագիտական հանձնաժողովի, ինչպես նաև գիտական մի շարք հանդեսների խմբագրական խորհուրդների և Հայաստանի ժուռնալիստների միության անդամ եք:

Ձեր մասնագիտական կարողությունների և գործի հանդեպ անմնացորդ նվիրումի շնորհիվ Դուք մեր հանրապետության գրահրատարակչության բնագավառի երախտավորներից եք, որի լավագույն վկայությունը գրահրատարակչության զարգացման գործում ներդրած ավանդի համար Ձեզ շնորհված «Մովսես Խորենացի» մեդալն է:

Մենք բարձր ենք գնահատում ակադեմիական համակարգում շուրջ կեսդարյա Ձեր արդյունավետ աշխատանքը: Հղելով մեր հոբելյանական շնորհավորանքները՝ սրտանց ցանկանում ենք Ձեզ երիտասարդական ավյուն և հետագա բեղմնավոր աշխատանք, քաջառողջություն և բարեկեցություն:

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՅՈՒԹՅՈՒՆ



Պատմաբաններն ու հայագետները բացահայտում են հայկական գաղթավայրերի մասին օտար աղբյուրները

Ա.թ. նոյեմբերի 2-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտում տեղի ունեցավ «Օտար աղբյուրները հայկական գաղթավայրերի մասին» միջազգային երկրորդ գիտաժողովը՝ նվիրված Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանի հիմնադրման 200-ամյակին (1821-2021թթ.):

Գիտաժողովին ներկայացվեց «Օտար աղբյուրները հայկական գաղթավայրերի մասին (պրակ Ա)» նյութերի ժողովածուն՝ նվիրված մեծամուն հայագետ, Մխիթարյան միաբանության անդամ Հայր Ղևոնդ Ալիշանի ծննդյան 200-ամյակին:

Ժողովածուի հրատարակությունը նախաձեռնել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայկական գաղթօջախների և Սփյուռքի պատմության բաժինը: Բաժնի վարիչ, պրոֆեսոր Գևորգ Ստեփանյանը, ողջունելով ներկաներին, ասաց. «Այսօր մեր ինստիտուտի պատմության մեջ ավելանում է ևս մեկ նշանակալի օր, հիմք ենք դնում նոր մատենաշարի: 2020 թ.-ի սեպտեմբերի 15-ին մենք կազմակերպել էինք միջազգային գիտաժողով՝ «Օտար աղբյուրները հայկական գաղթավայրերի մասին» խորագրով, որը լայն արձագանք գտավ, մասնակցության հայտ ներկայացրին Իտալիայից, Ֆրանսիայից, Հունաստանից, Հունգարիայից, Ռումինիայից, Շվեյցարիայից: Գիտաժողովը շատ հաջողությամբ ավարտեցինք և որոշեցինք հրատարակել այս ժողովածուն, որտեղ ընդգրկված է շուրջ 21 զեկույց: Մենք փորձում ենք վեր հանել մեր գաղթաշխարհի պատմությունը, հատկապես այն առանձնահատուկ հատվածը, որը վերաբերում է օտար հեղինակների ու ճանապարհորդների՝ հայկական գաղթավայրերի մասին անդրադարձներին: Այս առումով կա հսկայածավալ նյութ, և կան աղբյուրներ, որոնք պետք է մշակվեն և այսպիսի ժողովածուների տեսքով լույս տեսնեն»:

Շնորհավորելով գիտաժողովի մասնակիցներին՝ ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀՀ ԳԱԱ նախագահության անդամ Յուրի Սուվարյանն ասաց. «Այս ժողովածուն լուրջ հաջողություն է պատմագիտության ոլորտում: Բավականաչափ արժևորվել է ոչ միայն Ղևոնդ Ալիշանի գրական ժառանգությունը, այլ նաև այսօրվա խնդիրների տեսակետից դիտարկվել են շատ հարցադրումներ, հատկապես նրա աշխատությունը՝ նվիրված աշխարհագրական խնդիրներին, Հայաստանի սահմաններին, և այս ամենը ստացել են ժամանակակից հնչեղություն: Մաղթում եմ հաջող և արդյունավետ աշխատանք այս կարևոր միջոցառման բոլոր մասնակիցներին»:

Միանալով շնորհավորանքներին՝ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը նշեց. «Պատմագիտության մեջ մենք մի նոր բնագավառի ակոս ենք բացել: Հայկական գաղթօջախների և սփյուռքի պատմության բաժինը կարողացավ այս գիտաժողովների ու մատենաշարի ստեղծման շնորհիվ միավորել մեր սփյուռքի մասնագետներին: Ես հաջողություն եմ մաղթում գիտաժողովին և միաժամանակ համոզվածություն եմ հայտնում, որ այս շարքը կշարունակվի»:

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ալբերտ Խառատյանն էլ նշեց, որ ժողովածուն գիտական տեսակետից անգնահատելի ճանաչողական նշանակություն ունի. «Այն լայն տեսակետերի հավաքածու է հայկական գաղթօջախների մասին և ունի բացառիկ կարևորություն մեր պատմագիտության ոլորտում: Սա շատ հեռուն գնացող ճանապարհի սկիզբն է, որը վերհանում է հայության կենցաղի, պատմության, մշակույթի այն հետաքրքիր դրվագները, որոնք աչքի են զարնել օտար ճանապարհորդների մոտ»:

Ժողովածուի ստեղծման գաղափարը պատմաբան, թարգմանիչ, բանասեր, կինոգետ Արծվի Բախչիյանինն է, ով արտերկրում բնակվելու տարիներին բացահայտել է օտար աղբյուրներ, որոնք անդրադարձել են հայկական գաղթօջախներին: «Թե՛ ճանապարհորդները, թե՛ միսիոներները պարբերաբար հիշատակում են հայերին, որոնց նրանք համոզվել են աշխարհի տարբեր ծայրերում: Այդ նյութերը կարիք ունեն թարգմանության և ներկայացման: Տարբեր լեզուներ կրող մեր մասնագետները պետք է բացահայտեն տվյալ լեզուներով այն աղբյուրները, որոնցում կան վկայություններ հայության և հայ ժողովրդի մասին»:

Գիտաժողովի նիստերին ներկայացվեցին զեկույցներ՝ նվիրված Արևելքի, Եվրոպայի և ԱՄՆ-ի հայկական գաղթավայրերին, դրանց դերին և կարևորությանը: Ձեկույցներ ներկայացրին պատմաբաններ, հայագետներ, փորձագետներ Հայաստանից, Հունաստանից, Լիբանանից, Հորդանանից, Գերմանիայից, Հունգարիայից և Ռումինիայից:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

ՆԻԿՈԼԱՅ ԲԱՐԿԵՆԻ ԿՆՅԱԶՅԱՆ

(ծննդյան 70-ամյակի առթիվ)

Լրացավ տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Նիկոլայ Բարկենի Կնյազյանի 70-ամյակը:

ՀՀ ԳԱԱ քիմիայի և երկրի մասին գիտությունների բաժանմունքը, ՀՀ ԳԱԱ ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտի ողջ անձնակազմը շնորհավորում է հոբելյարին՝ մաղթելով քաջառողջություն, արգասաբեր գիտական, գիտակազմակերպական և դասախոսական գործունեություն:

Նիկոլայ Բարկենի Կնյազյանը 1972 թ. ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի քիմիկա-տեխնոլոգիական ֆակուլտետը, 1975-1978 թթ. սովորել է Լենինգրադի Լենսովետի անվ. տեխնոլոգիական ինստիտուտի ասպիրանտուրայում: 1979 թ.-ին պաշտպանել է թեկնածուական թեզը՝ «Սիլիկատային և ոչ մետաղական նյութերի տեխնոլոգիա» մասնագիտությամբ՝ ստանալով տ.գ.թ. գիտական աստիճան: 1988-1991 թթ. սովորել և ավարտել է նույն ինստիտուտի դոկտորանտուրան: 2011թ.-ին ՀՀ-ում պաշտ-

պանել է դոկտորական ատենախոսությունը՝ ստանալով տ.գ.դ. գիտական աստիճան:

1972 թ. աշխատանքի է անցել Կերամիկական իրերի կոմբինատում՝ որպես ինժեներ-տեխնոլոգ: 1974 թ. առ այսօր աշխատում է ՀՀ ԳԱԱ ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտում՝ սկզբում որպես ավագ ինժեներ, ապա՝ լաբորատորիայի վարիչ, 2006-2019 թթ.՝ որպես տնօրեն, 2019 թ.-ից մինչ օրս՝ նույն ինստիտուտի գիտական գծով փոխտնօրեն: Ն. Կնյազյանը տարիներ շարունակ ղեկավարել է տեղական և միջազգային գիտական և գիտատեխնիկական գործունեության մի շարք ծրագրեր:

2002-2006 թթ. եղել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի քիմիական տեխնոլոգիաներ և բնապահպանական ճարտարագիտություն ղեկավարման «Անօրգանական, սիլիկատային նյութերի և էլեկտրաքիմիական արտադրությունների տեխնոլոգիաներ» ամբիոնի վարիչ, 2013-2020

թթ.՝ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի «Բանբեր. Քիմիական և բնապահպանական տեխնոլոգիաներ» գիտական հանդեսի գլխավոր խմբագիր:

Նիկոլայ Կնյազյանն ավելի քան 250 գիտական հոդվածի և արտոնագրի հեղինակ է: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է 12 թեկնածուական թեզ: Ներկայումս 5 ասպիրանտի և հայցորդի գիտական ղեկավար է:

Ն. Կնյազյանի գիտական գործունեությունը մոր խոսք է ավելացրել անօրգանական և սիլիկատային նյութերի քիմիայի բնագավառում. բազմակողմանի և խոր ուսումնասիրությունները թույլ են տվել պարզել քիմիական փոխազդեցությունների բնույթը բարդ սիլիկատային և օքսիֆտորիդային համակարգերում (ալյումինիլիկատային, ալյումաբորատային, գերմանատային և այլն), երկֆազ ապակիների կառուցվածքային առանձնահատկությունները, ապակեգոյացման և վիճակի դիագնոստիկ փոխկապակցված-



յունը, երկֆազ ապակիների բյուրեղացման առանձնահատկությունները և ապակեբյուրեղային նյութերի ստացման տեսական և տեխնոլոգիական հիմունքները:

Նրա ղեկավարությամբ մշակվել և շարունակվում են մշակվել տեխնիկական նշանակության մոր ապակիներ (օպտիկական, կիսահաղորդչային, կատիոն-անիոնային հաղորդականությամբ, ապակեկերպ լյումինաֆորներ և այլն) և ապակեբյուրեղային նյութեր, որոնցից մի քանիսը ներդրվել է արտադրություն:



ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Գրիգոր Ալեքսանի Դարիբյանը 2021թ. հայ մտավորականության առջև հանդես եկավ «Հայ իմաստունների խոսքը» և «Բորիսովկա՝ Շոլոկ» մոր աշխատություններով: Ավելի վաղ հրատարակված «Հայ իմաստունների խոսքը» աշխատությունն արդեն իսկ արժանացել է ընթերցողների լայն շրջանակի բարձր գնահատականին, իսկ «Բորիսովկա՝ Շոլոկ» գիրքը, որը հայրենասիրության, երկրին նվիրվածության և մարդու գնահատման վառ օրինակ է, արժանի է հատուկ ուշադրության: Գիրքն արժևորվում է նաև այն առումով, որ հարգարժան պրոֆեսորն արդեն գերազանցել է 90-ամյա շեմը, բայց նրա կողմից ձեռնարկված յուրաքանչյուր գործ իրականացվում է խանդավառությամբ և երիտասարդական ավյունով: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ պրոֆեսոր Դարիբյանի հետաքրքրությունների շրջանակը շատ լայն է ու արժեքավոր: «Բորիսովկա՝ Շոլոկ» գիրքը կարդացվում է մեծ հետաքրքրությամբ: Այստեղ նկարագրված ու վերլուծված են գյուղի ձևավորման և կայացման փուլերը, նրա բնակիչների կողմից հայրենիքին մատուցված ծառայությունները, ինչպես նաև Սյունիք աշխարհի գեղեցկությունը: Գիրքը համալրված է ՀՀ ժողովրդական նկարիչ, պրոֆեսոր Զաքար Խաչատրյանի ու հեղինակի գեղանկարներով: Այդ եզակի գրքով փաստորեն անմա-

Գիտության և մշակույթի վաստակաշատ մշակի մոր աշխատությունների մասին և ոչ միայն

հացվեց Որոտանի ջրամբարի տակ անհետք մնացած գյուղը՝ իր կենսագրությամբ, մարդկանցով ու նրանց գործերով: Դա երևի գրախոսվող գրքի ամենամեծ արժանիքն է:

Գրիգոր Դարիբյանի երիտասարդ տարիներն անցել են Սյունիք աշխարհում, որի գեղեցկությունն ու վեհությունը իր վրա թողել են անմոռաց հիշողություններ տարածաշրջանի և նրա բնակիչների մասին: Այդ աշխարհը պատճառ հանդիսացավ նաև Գ. Դարիբյանի գեղանկարիչ դառնալու երազանքին: Դրա վկայությունն է ՀՀ ժողովրդական նկարիչ, ՀՀ գեղարվեստի պետական ակադեմիայի քանդակի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Գետիկ Բաղդասարյանի խոսքն այն մասին, որ Գրիգոր Դարիբյանը դեռևս դպրոցական տարիներից օժտված էր գեղանկարչական մեծ շնորհքով, և գեղանկարիչ դառնալու անհագուրդ ձգտումը նրան 1946 թ. տարավ Երևանի Փանոս Թերլեմեզյանի անվան նկարչական ուսումնարան:

Սակայն ավարտական 3-րդ կուրսում ուսումնարանում ուսման տևողությունը երեքից դարձավ հինգ տարի, ինչը Գրիգորի համար նյութական բնույթի լուրջ խնդիրներ ստեղծեց, և նա 1948թ. կեսերին զուգահեռ ավարտեց Երևանի կայարանի երեկոյան բաներիտ միջնակարգ դպրոցը և ընդունվեց Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետ: 1954 թ. գերազանցությամբ ավարտեց համալսարանը, իսկ 1962 թ.՝ Ռոսկվայի պետական համալսարանի ասպիրանտուրան: 1963 թ. պաշտպանեց թեկնածուական, իսկ 1973 թ.՝ դոկտորական ատենախոսություն:

Պրոֆեսոր Գ. Դարիբյանը շուրջ 70 տարի աշխատեց Երևանի պետական համալսարանում: Երկար տարիներ գլխավորեց տնտեսագիտության տնտեսության ամբիոնը, դարձավ ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, հրատարակեց ավելի քան 100 գիտական աշխատանք և իրականացրեց 50-ից ավելի ատենախոսութ-

յունների գիտական ղեկավարությունը: Գ. Դարիբյանի կյանքի աշխատանքային տարիներն անմնացորդ նվիրված են եղել մարդկային կապիտալի զարգացման և մեր երկրի բարգավաճմանն ուղղված հիմնախնդիրների լուծմանը:

Գիտակրթական ոլորտում ունեցած անուրանալի ծառայությունների համար տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Գ. Դարիբյանը 2000թ. ընտրվեց ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ: Պարգևատրվել է «Մովսես Խորենացի» մեդալով, նրան շնորհվել է ՀՀ գիտության վաստակավոր գործիչ պատվավոր կոչում: Վաստակաշատ մտավորականն արժանացել է նաև ՀՀ Ազգային ժողովի, կառավարության, կրթության և գիտության նախարարության, ՀՀ Կենտրոնական բանկի, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի, Երևանի պետական համալսարանի և Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի և Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի ոսկե մեդալների և մի շարք այլ պարգևների: 2010 թ. Սյունիքի մարզպետարանի կողմից նրան շնորհվել է «Պատվավոր սյունեցի» կոչումը:

Գիտականի հետազոտությունները նվիրված են անցումային տնտեսությունում բնակչության կենսամակարդակի բարձրացման, բաշխման և վերաբաշխման գործընթացների կարգավորման, կապիտալի նախասկզբնական կուտակման, աշխատանքի շուկայի ձևավորման, մարդկային կապիտալի զարգացման և այլ հիմնախնդիրների: Դրանք այն կարևորագույն հարցերն են, որոնք տարբեր ուժգնությամբ կանգնում են կենտրոնացված կառավարման մոդելից ազատական տնտեսական հարաբերություններին անցնող ցանկացած երկրի առջև, և որոնց լուծումը պահանջում է քրտնաջան ու հետևողական աշխատանք: Նշված խնդիրներին զուգահեռ, մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված, Հայաստանը կանգնեց նաև արտագաղթի հիմնահարցի

առջև, որը, անշուշտ, ունեցավ լուրջ բացասական հետևանք երկրի ազգային անվտանգության վրա: Այս հարցերի լուծումը ևս մշտապես գտնվել է պրոֆեսոր Գ. Դարիբյանի սկզբունքային կենտրոնում:

Պրոֆեսոր Դարիբյանն իր մանկության ընկեր, ՀՀ ժողովրդական նկարիչ Զաքար Խաչատրյանի հորդորով 83 տարեկանում վերստին վերադարձավ գեղանկարչությանը: Վեց տարի ստեղծագործելուց հետո՝ 2016 թ.՝ Հ. Շաբաբյանի անվան ժողովրդական ստեղծագործության կենտրոնում և Երևանի պետական համալսարանում կազմակերպվեցին Գ. Դարիբյանի գեղանկարների ցուցահանդեսները՝ նվիրված լուսահոգի տիկնոջ՝ Գայանե Սողոմոնովնայի հիշատակին, և 2019 թ.՝ Երևանի պետական համալսարանի հիմնադրման 100-ամյակին: Ներկայացված գեղանկարները ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արարատ Աղասյանի, արվեստագիտության դոկտոր, ԵՊՀ արվեստի պատմության ու տեսության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Լևոն Զուգասյանի և այլ մասնագետների կողմից արժանացան բարձր գնահատականի:

Այդ նույն հոդվածում պրոֆ. Դարիբյանն իր վրդովմունքն է արտահայտում նաև մեծ հայագետ ու բյուզանդագետ Նիկողայոս Ադոնցի նկատմամբ եղած վերաբերմունքի համար:

Գնահատելի է, որ իր ծննդավայրի՝ Սյունիքի նկատմամբ նվիրվածության, սրտացավության ու մեծ սիրո այդ հոգեբանությունն ու վերաբերմունքը համեստորեն շարունակում է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, պատվավոր սյունեցի մեր 91-ամյա մահապետ Գրիգոր Ալեքսանի Դարիբյանը:

Վարդան ԲՈՍՍՆԵՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր,
պրոֆեսոր

Մովսես Խորենացու «Հայոց պատմության» սերբերեն թարգմանության շնորհանդեսը Բելգրադում

Մովսես Խորենացու համաշխարհային պատմագրության մեջ բացառիկ արժեք ունեցող «Հայոց պատմություն» կոթողային աշխատությունը թարգմանվել է մաս սերբերեն: Սա կարևոր մշակութային իրադարձություն է հայ և սերբ բարեկամ ու բախտակից ժողովուրդների կյանքում:

Նման կարևորագույն ձեռնարկն իրականացվել է սերբ ժողովրդին անսահման նվիրված դուստր, գրող, թարգմանիչ, արվեստագետ Վեսնա Պեշիչի և Հայաստանում Սերբիայի պատվավոր հյուպատոս Բաբկեն Սիմոնյանի եռանդուն ջանքերով:

Մովսես Խորենացու «Հայոց պատմության» շնորհանդեսին մասնակցելու համար Հայաստանից իրավիճվել էին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Խ. Աբովյանի անվան ՀԱՄԻ հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Ալիսա Դուլսանյանը, որը Խորենացու պատմության մասնագիտական առաջաբանի հեղինակն է, մաս Երևան քաղաքի թանգարանի փոխտնօրեն Լուսինե Ամիրջանյանը:

Բաբկեն Սիմոնյանը հսկայական ջանքեր է գործադրում հայ-սերբական գրական և մշակութային կապերն ամրապնդելու գործում: Նա սերբերենին տիրապետում է մայրենիի մակարդակով և տաղանդավոր թարգմանություններ է կատարում սերբերենից հայերեն, հայերենից սերբերեն: Դրան հատկապես նպաստում են նրա քաջահմուտ բանաստեղծ լինելն ու բանաստեղծական հանգին բնատուր տիրապետելը:

Խորենացու պատմության շնորհանդեսը տեղի ունեցավ շքեղ պալատի դահլիճում՝ զարդարված թարմ ծաղիկներով ու Հայաստանի Հանրապետության դրոշով: Հանդիսության սկզբում և վերջում՝ հյուրասիրության հատվածում, հնչում էին Շառլ Ազնավուրի երգերը: Այդ շքեղությունը, անշուշտ, ապահովել էր Հայաստանի դեսպանը՝ Աշոտ Հովակիմյանը, որն առաջինը հանդես եկավ բացման խոսքով: Հավաքվածներին ջերմորեն ողջունեց Վեսնա Պեշիչը, որի «Պեշիչ և որդիներ» հրատարակչությանն ենք պարտական գրքի թարգմանության և հրատարակման համար: Հիմալի սերբերենով ելույթ ունեցավ Բաբկեն Սիմոնյանը, որը խոսեց թարգմանության ընթացքում իր կատարած դերի մասին, այնուհետև խոսեց թարգմանության առաջաբանի հեղինակ Ա. Դուլսանյանը, և ամփոփման խոսքով հանդես եկավ Աշոտ Մելքոնյանը, որի խոսքին դահլիճը արձագանքեց բուռն ծափահարություններով:

Ուշագրավ էր, որ սկզբում երիտասարդ ու գեղեցիկ սերբ դերասանուհին թատերականացված ձևով հատված ներկայացրեց «Հայկ և Բել» առասպելից:

Ողջ երեկոն ընթացավ հայ և սերբ մտավորականների անկեղծ ջերմության ու փոխըմբռնման մթնոլորտում: Վեսնա Պեշիչը և Բաբկեն Սիմոնյանը այնպես էին կազմակերպել, որ Երևանից ժամանած երեք մտավորա-



կանները ծանոթանալին Բելգրադի տեսարժան վայրերին, մաս մասնակցեին Հայաստանի մշակույթի օրերին Բելգրադում: Հոկտեմբերի 7-ին մասնակցեցին միջազգային կինոփառատոնի, որի ժամանակ անվանի կինոբեմադրիչ Գարեգին Ջաքոյանը ներկայացրեց Սերգեյ Փարաջանովի հանճարին՝ դրվագներ պատմելով նրա կյանքից: Գործադրված պերեստրոյկայի մասին Փարաջանովն ասել է. «Ես պերեստրոյկայի ցուցափեղկն եմ»: Նա ցուցադրեց իր գրքերը՝ նվիրված Փարաջանովին: Ի թիվս այլ ֆիլմերի՝ «Նամակներ բանտից», «Ավետյաց երկիր», «Նաղաշ Հովնաթան» և այլն, ցուցադրվեց մաս Փարաջանովի՝ հին թիֆլիսի նվիրված ֆիլմը:

Մենք եղանք Բելգրադի հին ամրոցում, որտեղ տեսանք 17-18-րդ դարերի երեք հայկական գերեզմանաքարեր և մեկ 17-րդ դարի խաչքար: Շատ տպավորիչ էր, որ ընդամենը մի քանի տարի առաջ կառուցված Սուրբ Սավայի անվան շքեղաշուք տաճարի մետաղյա դռան վրա կար հայատառ մեծ արձանագրություն, որը դիմում էր առ Աստված: Այդ տաճարը Բալկանների ամենամեծ եկեղեցին է:

Բելգրադի հին ամրոցում կանգնեցված է «Հաղթանակ» հսկա արձանը, որը պատկերում է գեղեցիկ մերկ տղամարդու՝ մի ձեռքին սուրը, մյուս ձեռքին՝ խաղաղության աղավնին:

Դիտելով այդ արձանը՝ հիշեցի անմահ Թումանյանի՝ սերբ ժողովրդի մասին ասված հետևյալ խոսքերը. «Բոլոր սլավոն ժողովուրդների մեջ սերբերն ամենաազատատենչն են»:

Բաբկեն Սիմոնյանը մեզ հանդիպման տարավ Նորին սրբություն Սերբիայի պատրիարք Պորֆիրիի հետ: Վերջինս վարժ խոսում էր ռուսերեն և հիմալի գիտեր Հայաստանի անցյալ ու ներկա պատմությունը: Խոսեց ցեղասպանության մասին, ասաց, որ շատ է սիրում Ջիվան Գասպարյանի դուրուկի նվագը և հատկապես հայկական կոմյակը: Նա մաս զգուշացրեց աչալուրջ լինել հայ-թուրքական հարաբերություններում: Նրան ուրախություն պատճառեց Խորենացու «Հայոց պատմության» թարգ-

մանությունը, որը Վեսնա Պեշիչը նվիրեց նրան:

Ջարմանահորաշ էր Բելգրադի ծայրամասում գտնվող Գրքի թանգարանը, որն ուներ 15 սենյակներ: Հավաքածուն, իրոք, եզակի էր, և այն սկսել էին հավաքել Լազիչ ընտանիքի անդամները 1882 թվականից: Հավաքածուում կային Աֆրիկայի, Ասիայի, Եվրոպայի տարբեր երկրների հին ու նոր գրքեր: Հատկապես հետաքրքիր էին եթովպական ձեռագիր մատյանները, որոնց տառերը նման էին Մաշտոցյան այբուբենին:

Հայկական գրքերի բաժնում առանձին շարքով դրված էր Բաբկեն Սիմոնյանի հայերեն ու սերբերեն գրքերի հարուստ հավաքածուն: Ծխախոտի տուփի չափով գրադարակում կային հայ ժամանակակից հեղինակների՝ Պարույր Սևակի, Սիլվա Կապուտիկյանի և ուրիշների՝ մատնոցի չափ գրքերի հատորները: Գրադարանն ուներ չափազանց մեծ և չափազանց փոքր գրքերի հավաքածուներ, եզակի փաստաթղթեր, իրավարտական, ինչպես օրինակ՝ Նապոլեոն Բոնապարտի մի իրավարտական:

Եղանք մաս Բելգրադ քաղաքի թանգարանում, որը տեղավորված էր քաղաքի կենտրոնում գտնվող իշխանուհի Լյուբիցայի ապարանքում:

XIX դարի սկզբին կառուցված ապարանքում որոշակի երևում էր արևելյան ու եվրոպական ոճերի խառնուրդը:

Երևան քաղաքի թանգարանի փոխտնօրեն Լուսինե Ամիրջանյանը Բելգրադ քաղաքի թանգարանի տնօրենի հետ պայմանավորվեց հետագա համագործակցության համար:

Չմայած Բելգրադում գտնվելու 6 օրերի ընթացքում ամեն օր անձրևը էր տեղում՝ առանց կտրվելու, սակայն մեզ հյուրընկալողների ջերմությունը զգալ չտվեց հայերի համար ոչ սովորական բնության այդ երևույթը:

Եղանք մաս Սերբիայի պատմության ազգային թանգարանում, որտեղ, պատմական ցուցանմուշներից բացի, առանձին սրահներում ներկայացված էին Սերբիայի հին և նոր մշակույթի նմուշները, ինչպես մաս եվրոպական նկարիչների, օրինակ՝ Պիկասոյի կտավները: Ազգային պատմական թանգարանի շենքը ճարտարապետական ուշագրավ կառույց էր:

Մեզ օդանավակայանում դիմավորեցին Բաբկեն Սիմոնյանը և «Համի ատելյեի» տնօրեն Ջորավկո Յովիչը, որոնք մեզ տարան ուղիղ իրենց ատելյե, որտեղ մի խումբ սերբ մտավորականների հետ առաջին ջերմ հանդիպումն էր և ընտիր հյուրասիրությունը: Մենք միանգամից մեզ զգացինք Հայաստանում՝ մեր տանը:

Գեղեցիկ քաղաք է Բելգրադը: Նախավերջին օրը Բելգրադի հեռուստատեսությունից հարցազրույց եղավ իմ և Աշոտ Մելքոնյանի հետ: Մենք պատմեցինք մեր տպավորությունների մասին: Հարցազրույցը վարում էր հայ ժողովրդի մեծ բարեկամ Վեսնա Պեշիչը, որը գիրք է գրում Հայաստանի ու հայերի մասին:

Ալիսա Դուլսանյան

Նա մեռավ հայ բառը շուրթերին. Ֆրիտյոֆ Նանսեն



Հոկտեմբերի 14-ին «Առնո Բաբաջանյան» համերգասրահում տեղի ունեցավ 20-րդ դարի մեծ մարդասեր, խաղաղության Նոբելյան մրցանակի դափնեկիր Ֆրիտյոֆ Նանսենի ծննդյան 160-ամյակին նվիրված հոբելյանական ցերեկույթը:

«Կարելի է ասել, որ **սա գիտամշակութային ցերեկույթ էր, որի ընթացքում հյուրերն ունկնդրեցին Մանկա-**

վարժական համալսարանի կուլտուրայի ֆակուլտետի երաժշտության ամբիոնի ուսանողների կատարումները, որին հաջորդեց գիտական հատվածը՝ զեկուցումներ Նանսենի մասին և երեք գրքերի շնորհանդես»,- մեզ հետ զրույցում ասաց Հայաստանի Ֆրիտյոֆ Նանսենի ինստիտուտի գործադիր տնօրեն Հայարկի Խաչատրյանը:

Ցերեկույթի մշակութային հատվածն ապահովեց Մանկավարժական համալսարանի կուլտուրայի ֆակուլտետի երաժշտության ամբիոնը՝ ամբիոնի վարիչ, վաստակավոր արտիստ Արա Գևորգյանի, Հասմիկ Լեյլոյանի և Նորայր Դավթյանի զխավորությամբ:

Նանսենի ամբողջ կյանքը ներկայացրեց ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Էդիկ Մինասյանը: Ցերեկույթի գիտական հատվածը բացեց Ֆրիտյոֆ Նանսենի հիմնադրամի հիմնա-

դիր նախագահ, Ֆրիտյոֆ Նանսեն թանգարանի տնօրեն Ֆելիքս Բախչինյանը, որն այս հոբելյանի առթիվ մի քանի գիրք էր հրատարակել, որոնցից երկուսը հենց իր աշխատասիրությամբ:

«Նա մեռավ հայ բառը շուրթերին», «Հայաստանը և Նանսենը», «Հայ գրողները Ֆրիտյոֆ Նանսենին» գրքույկը, որտեղ տարբեր հեղինակներ իրենց ստեղծագործություններով անդրադարձել են Նանսենին, Ֆելիքս Բախչինյանը իր գեկույցում ներկայացրեց այն ամենը, ինչ նվիրված է Հայաստանում Նանսենին՝ դպրոցներ, այգիներ, հիմնադրամ, ինչպես մաս ներկայացրեց նրա հայանպաստ գործունեությունը, խոսեց Նանսենյան անձնագրի մասին:


«Գրքում ընթերցողին են ներկայացված Նանսենի բոլոր գիտական գործերը, ինչպես մաս Հայաստանին նվիրված նրա գրքի մասին ամբողջական վերլուծական աշխատությունը»,- իր խոսքում նշեց Ֆելիքս Բախչինյանը:

Արտակարգ իրավիճակների նախարարի խորհրդական, գրող-արձակագիր Անդրանիկ Հակոբյանն իր խոսքն ուղղեց սրահում ներկա դպրոցականներին՝ ասելով. «Այսօր կարևոր է իմանալ Նանսենի մասին: 100 տարի առաջ Նանսենը խոսում էր այսօրվա համար արդիական թեմաներով: Եվ հիմա՝ 21-րդ դարում, մենք կարիք ունենք Նանսենների: Ամբողջ քաղաքակրթ աշխարհը լուռ էր անցած տարի, և չեղավ մի Նանսեն, որ բարձրաձայն էր ամենի մասին»:

Ցերեկույթը եզրափակեց բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սերգո Երիցյանը՝ ևս մեկ անգամ շնորհավորելով կազմակերպիչներին: «Շնորհավոր փառավոր հոբելյանը: Շատ կարևոր է, որ հիշում և գնահատում են Նանսենին Հայաստանում»,- խոսքում նշեց Սերգո Երիցյանը:

Հասմիկ Մխիթարյան
Հասմիկ Ավետիսյան

Շայ գիտնականների նվաճումը վնասված կամ ոչ ֆունկցիոնալ օրգանների վերականգնման և փոխարինման համար սկաֆոլդների ստեղծման գործում



ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Լևոն Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի գիտնականները մշակում են ոչ իմունոգեն, փոխպատվաստման պատրաստ սկաֆոլդներ կամ բջջային մատրիքսներ, որոնք կարող են օգտագործվել ռեգեներատիվ բժշկության մեջ՝ վնասված կամ ոչ ֆունկցիոնալ օրգանների, հյուսվածքների վերականգնման և փոխարինման համար:

Հետազոտություններն իրականացվում են Ֆիզիոլոգիայի ինստիտուտի իմունոլոգիայի և հյուսվածքային ինժեներիայի լաբորատորիայում՝ կենսաբանական գիտությունների թեկնածու Ջարուհի Կարաբեկյանի գլխավորությամբ:

«Սկաֆոլդ ստանալու առաջին քայլը կենդանական հյուսվածքի ապաբջջայնացումն է՝ կենդանու հյուսվածքից բոլոր կենդանական բջիջների հեռացումը, որի արդյունքում մնում է թափանցիկ արտաբջջային մատրիքս կամ սկաֆոլդ: Սկաֆոլդը հյուսվածքային ճարտարագիտության մեթոդներում օգտագործվող կառուցվածք է, որը ծառայում է որպես հենարան բջիջների համար՝ ապահովելով դրանց ամրանալու և գոյատևելու հնարավորությունը, նմանակելով և փոխարինելով նորմալում այդ բջջին շրջապատող արտաբջջային մատրիքսին: Բջիջներից ազատ մատրիքսը նյութակառուցվածքային կազմությամբ զրեթե չի տարբերվում կենդանիների և մարդկանց մոտ, որն էլ հնարավորություն է տալիս կենդանական աղբյուրներից ստացված սկաֆոլդը վերաբնակեցնել մարդկային բջիջներով և փոխպատվաստելու հենց մարդուն», - բացատրում է Ջարուհի Կարաբեկյանը:

Ըստ նրա՝ փորձերում օգտագործվել են ինչպես առնետների, մկների, ճագարների, խոզերի, այնպես էլ մարդու հյուսվածքային նմուշներ: «Փորձեր ենք իրականացրել՝ ստեղծելու մաշկի սկաֆոլդի անսահմանափակ և մատչելի աղբյուր հանդիսացող այլընտրանքային սկաֆոլդ՝ մաշկի փոխպատվաստման համար: Ինչպես նաև փորձեր են արվում ամբողջական օրգանների ինժեներիայի ուղղությամբ՝ նպատակ ունենալով ստանալու ամբողջական լյարդ և երիկամ: Հետազոտություններն ունեցել են դրական ելք», - նշում է Ջարուհի Կարաբեկյանը:

Որպեսզի օրգանիզմը չվանի սկաֆոլդը փոխպատվաստման ժամանակ, այսինքն՝ տեղի չունենա օրգանիզմի կողմից փոխպատվաստուկի մերժում, պետք է փոխպատվաստվող հյուսվածքի բջիջներն օժտված լինեն նույն մակերեսային սպիտակուցների խմբերով, ինչ ռեցիպիենտի բջիջները: Այս նպատակով Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտում սկսել են ստեղծել հայկական պոպուլյացիային բնորոշ մեզենքիմալ ցողունային բջիջների շտեմարան, որպեսզի հետագայում կարողանան տարբերակել ու կիրառել հետազոտական և կլինիկական նպատակներով՝ ընտրել պացիենտին համապատասխան

նող տեսակը և դրա միջոցով կառուցել փոխպատվաստվելիք հյուսվածքը:

«Մեր լաբորատորիայում փորձեր են արվում ստանալու մաշկի և սրտի փակա-նի սկաֆոլդներ բիոտպագրության մեթոդով, որպեսզի ստացված արդյունքը համեմատենք բնական ծագում ունեցող սկաֆոլդների հետ և ընտրենք լավագույնը: Բացի այդ, հետազոտել ենք բջիջների կուլտիվացման (պահման և աճեցման) համար մարդկային շիճուկի կիրառման հնարավորությունը: Բանն այն է, որ աշխարհում բջիջների կուլտիվացման համար մեծ մասամբ կիրառվում է կովի սաղմնային արյան շիճուկը՝ որպես սննդամիջավայր: Լինելով կենդանական ծագման՝ այն պարունակում է ռիսկեր, որոնցից է կենդանական հիվանդությունների փոխանցումը: Այդ պատճառով մարդկային բջիջների և հյուսվածքների կուլտիվացման համար որպես հնարավոր օպտիմալ այլընտրանք կարելի է դիտարկել մարդկային շիճուկի կիրառումը: Մեր կողմից իրականացված փոխարինող շիճուկի հետազոտությունները ևս դրական ելք են ունեցել՝ ապահովելով բարձր էֆեկտիվություն: Աշխատանքները շարունակվում են էֆեկտիվության երկարաժամկետությունն ապահովելու ուղղությամբ», - նշում է Ջարուհի Կարաբեկյանը:

Կատարված հետազոտությունները ներկայացվել են տարբեր միջազգային համաժողովների ժամանակ: Որպես համահեղինակ՝ Springer հրատարակչությունում 2020 թվականին տպագրվել է «Հյուսվածքային ինժեներիա» գիրքը (հեղինակներ՝ Նարինե Սարվազյան (կ.գ.թ.), Ջարուհի Կարաբեկյան (կ.գ.թ.), Յովհաննես Արեստակեսյան (կ.գ.թ.), Վահան Գրիգորյան, Վարդան Ավետիսյան, Լիանա Հայրապետյան, Մարիամ Գրիգորյան, Աստղիկ Կարապետյան, Արտեմ Օգանեսյան, Արման Սիմոնյան, Աննա Սիմոնյան): Ինչպես նաև համատեղ ջանքերով տպագրվել է հոդված «Research on Biomedical Engineering» հեղինակավոր պարբերականում (https://doi.org/10.1007/s42600-021-00141-8), (հեղինակներ՝ Լիանա Հայրապետյան, Յովհաննես Արեստակեսյան (կ.գ.թ.), Անուշ Մարգարյան, Արտեմ Օգանեսյան, Վահան Գրիգորյան և Աստղիկ Կարապետյան):

Հետազոտություններն իրականացվել են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Գիտության պետական կոմիտեի ֆինանսավորմամբ՝ «Engineered skin via natural recourses» (Grant Number 18T-1F275), «Generation of non-immunogenic Mesenchymal Stem Cells for Tissue Repair» (Grant Number 15T-1F359) ծրագրերի, ինչպես նաև հայ-բելառուսական գիտական համագործակցությամբ ձեռք բերված դրամաշնորհի շրջանակներում՝ «Biocompatibility of multicomponent allogeneic cells with decellularized liver scaffold», (Grant Number 18BL-028):

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի ՀՀ ԳԱԱ օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի Մոլեկուլի կառուցի ուսումնասիրման կենտրոնը հայտարարում է ընտրություն Օպտիկական սպեկտրոմետրիայի լաբորատորիայի վարիչի թափուր տեղի համար

Համաձայն «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա գիտական կազմակերպություն» պետական ոչ առևտրային կազմակերպության տիպային (օրինակելի) կանոնադրության 16-րդ կետի՝ թեկնածություն առաջադրելու իրավունք ունեն համապատասխան բաժանմունքի բյուրոն, գիտական կոլեկտիվը և կազմակերպության գիտական գործունեությանը համապատասխանող մասնագիտությամբ ՀՀ ԳԱԱ անդամները:

Առաջադրված թեկնածուի համար կազմակերպության մասնագիտական ուղղվածությանը համապատասխան գիտական աստիճանի առկայությունը պարտադիր է:

Անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

1. Դիմում
2. Լուսանկար
3. Քաղվածք աշխատանքային

ՀՀ ԳԱԱ Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտը հայտարարում է մրցույթ բույսերի կարգաբանության և աշխարհագրության բաժնի վարիչի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, ովքեր ունեն. ա) կենսաբանական գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան, բ) գիտական գործունեության առնվազն 10 տարվա փորձ, գ) վերջին 5 տարվա ընթացքում հեղինակ են առնվազն գիտական 10 աշխատության:

ՀՀ ԳԱԱ Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի բաժնի վարիչի թափուր պաշտոնի մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

- գրավոր դիմում,
- երկու լուսանկար՝ 3x4 չափի,
- տեղեկանք աշխատանքի վայրից,
- ինքնակենսագրություն,
- ամօժնագրի պատճեն,
- թեկնածուի կամ դոկտորի գիտական

ՀՀ ԳԱԱ «Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ ինստիտուտի արևմտահայերենի բաժնի վարիչի թափուր տեղի համար:

Դիմողը պետք է ունենա գիտական աստիճան, տվյալ ոլորտում գիտական վաստակ, գիտական աշխատանքներ ղեկավարելու ունակություն:

Անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

- ա) դիմում,
- բ) լուսանկար,
- գ) քաղվածք աշխատանքային գրքույկից,
- դ) ինքնակենսագրություն,
- ե) բարձրագույն կրթության դիպլոմի պատճեն,
- զ) գիտական աստիճանը հաստատող դիպլոմի (դիպլոմների) պատճեն,
- է) կարգերի հաշվառման ամօժնական թերթիկ,
- ը) տեղեկանք մշտական բնակության վայրից,
- թ) հրատարակված աշխատանքների ցանկ,
- ժ) գիտական կոչումը հաստատող փաստաթուղթ (դրա առկայության դեպքում),
- ժա) բնութագիր վերջին աշխատավայրից:

Փաստաթղթերը պետք է ներկայացնել մեկ ամսվա ընթացքում (հայտարարությունը հրապարակելու օրվանից) հետևյալ հասցեով՝ Երևան, Գր. Լուսավորչի 15, ՀՀ ԳԱԱ

Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ (գիտական քարտուղարին),
հեռ. 56-53-37:

գրքույկից

4. Ինքնակենսագրություն
 5. Բարձրագույն կրթության, գիտական աստիճանի և գիտական կոչման դիպլոմների պատճենները
 6. Կարգերի հաշվառման ամօժնական թերթիկ
 7. Գիտական աշխատությունների ցուցակ
 8. Բնութագիր աշխատավայրից:
- Թեկնածուի հիմնավորված առաջադրումը վերոնշյալ փաստաթղթերի հետ միասին 15 օրվա ընթացքում (հայտարարության հրապարակման օրվանից) խնդրվում է ներկայացնել ՀՀ ԳԱԱ ՕԴՔ ԳՏԿ գիտքարտուղարին հետևյալ հասցեով՝ 0014, Երևան, Ազատության 26, հեռ. 28-52-91:

ՀՀ ԳԱԱ օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն

աստիճանը հավաստող փաստաթուղթ,

- կարգերի հաշվառման ամօժնական թերթիկ լրացված,
- բնութագիր վերջին աշխատավայրից,
- հրատարակված աշխատությունների ցանկ՝ հաստատված համապատասխան կարգով:

Մրցույթին մասնակցելու համար դիմումներն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ԳԱԱ Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի գիտքարտուղարին՝ սույն հայտարարության հրապարակման օրվանից սկսած մեկ ամսվա ընթացքում (բացի շաբաթ և կիրակի օրերից):

Հասցեն՝ ք. Երևան 0063, Աճառյան փ. 1, հեռախոս՝ 010 628211, +374 94147775:

Գիտություն

Գլխավոր խմբագիր՝ Ա. ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24բ, հեռ. 56-80-14, 077 31 63 76
Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:
Ստորագրված է տպագրության՝ 23.11.2021 թ.:

"ГИТУТЮН" ("Наука") газета НАН РА